# Շուշաններ

**Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան**
**Հիշողության սահմանափակում՝ 256 MB**
**Կշիռը՝ 100 միավոր**

*Շարադրանք*

Շուշանիկը սիրում է շուշաններ աճեցնել: Նա գնել է շուշանների ինչ-որ քանակությամբ սոխուկներ: Սոխուկներից տարբեր գույնի շուշաններ են աճելու: Շուշանիկը գիտի, թե որ գույնի շուշանի քանի սոխուկ ունի, բայց սոխուկներն իրար նման են, և արտաքինից անհնարին է պարզել, թե որ մեկից ինչ գույնի շուշան է դուրս գալու:

Շուշանիկը խոստացել է ընկերուհուն, որ նրան ինչ-որ քանակությամբ սոխուկներ է նվիրելու, որպեսզի նա ևս շուշաններ տնկի: Շուշանիկը ուզում է իրեն պահել այնքան սոխուկներ, որպեսզի համոզված լինի, որ տնկելուց հետո ինքը յուրաքանչյուր գույնից առնվազն մեկ շուշան կունենա, մյուս կողմից, նա ցանկանում է ընկերուհուն, որքան հնարավոր է, շատ սոխուկներ նվիրել:

Օգնեք Շուշանիկին պարզելու, թե քանի սոխուկ նա պետք է իրեն պահի:

*Մուտքային տվյալներ*

Առաջին տողում տրված է Շուշանիկի գնած սոխուկների տեսակների n ($1 \le n \le 100$) քանակը: Երկրորդ տողում տրված են, 100-ին չգերազանցող, n հատ բնական թվեր, որոնք ցույց են տալիս, թե Շուշանիկը յուրաքանչյուր տեսակից քանի սոխուկ է գնել:

*Ելքային տվյալներ*

Պետք է արտածել մեկ թիվ՝ սոխուկների մինիմալ քանակը, որ Շուշանիկը պետք է տնկի, որպեսզի յուրաքանչյուր գույնի շուշանիկից առնվազն մեկ հատ ունենա:

*Օրինակներ*

| **Մուտք** | **Ելք** |
|---|---|
| 3<br> 5 6 7 | 14 |
| 1<br> 10 | 1 |